**Արագածոտնի մարզպետը քաղաքացիների ընդունելություն կատարեց Ապարանի տարածաշրջանում**

Սեպտեմբերի 25-ին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը քաղաքացիների ընդունելություն կատարեց Ապարանի քաղաքապետարանում, որին մասնակցեցին տարածաշրջանի բոլոր համայնքների բնակիչները: Համայնքապետերը իրենց համայնքներում նախապես  իրազեկել էին ընդունելության մասին, եւ բնակիչները հնարավորություն ունեցան  մարզպետին իրենց մտահոգող հարցերով դիմել տեղում եւ չգնալ մարզկենտրոն:

Ընդհանուր առմամբ, ընդունելությանը մասնակցեց  33 մարդ: Հարցադրումները վերաբերում էին բուժօգնությանը, բնակարանների վերանորոգմանը, առողջարանի ուղեգրեր ստանալուն, սակայն, դիմումատուների մեծ մասը դրամական օգնության խնդիր ունեին: Ընդհանուր առմամբ, դրամական օգնություն ստացավ 27 դիմումատու:

Ընդունելությունից հետո Սարգիս Սահակյանն այցելեց Նիգավան համայնք՝ հանդիպելու տեղի բնակիչների հետ: Այցը կատարվել էր իրենց՝ գյուղի բնակիչների պահանջով: Նրանք մարզպետին ներկայացրին իրենց համայնքում առկա խնդիրները, որոնց վերաբերյալ մարզպետը համապատասխան պարզաբանումներ կատարեց եւ լուծման հնարավոր ուղիներ նշեց:

Սաթենիկ Ձորյան